Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Վահան Մարտիրոսյան,

♦ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար,

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Էստոնիայի Հանրապետություն, քաղաք Տալլին, 2017թ. սեպտեմբերի 20-ից 22-ը:

♦ ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Եվրոպական հանձնաժողով,
Էստոնիայի Տնտեսական հարցերով և կապի նախարարություն:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Կապակցելով Եվրոպան» համաժողովին և վերջինիս շրջանակներում կայանալիք Արևելյան գործընկերության տրանսպորտի նախարարների հանդիպմանը:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2017թ. սեպտեմբերի 21-ից 22-ը Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում կայացած «Կապակցելով Եվրոպան» համաժողովին մասնակցել են Եվրոպական հանձնաժողովի, ԵՄ խորհրդարանի նախագահության եռյակի (Էստոնիա, Բուլղարիա և Ավստրիա) ներկայացուցիչներ, վեց ԵՄ Արևելյան գործընկերության երկրների, ԵՄ անդամ-պետությունների տրանսպորտի ոլորտը համակարգող նախարարներ, փոխնախարարներ և բարձրաստիճան

պաշտոնյաներ, ինչպես նաև Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Համաշխարհային բանկի ներկայացուցիչներ:

Համաժողովում բացման խոսքով հանդես է եկել Էստոնիայի վարչապետ Յուրի Ռատասը, ԵՄ հանձնաժողովի փոխնախագահ Մարոս Սեֆկովիչը, ԵՄ հանձնակատար Վիոլետա Բուլչը, Էստոնիայի Տնտեսական հարցերով և կապի նախարար Կադրի Սիմսոնը, ԵՄ հանձնաժողովի շարժունակության և տրանսպորտի բաժնի գլխավոր տնօրեն Հենրի Հոլոլեյը և այլոք:

Համաժողովի կարգախոսն էր «Միասնությունը հավասարակշռության միջոցով»: Միջոցառումն ուղղված էր տարբեր ոլորտների, տեսակետների, ավանդույթների և շահերի միջև հավասարակշռություն հաստատելուն՝ հնարավոր լավագույն արդյունքները ապահովելու նպատակով: Այդ նպատակով քննարկվել են բաց տնտեսության և հասարակության ձևավորման, ապահովության և անվտանգության ապահովման, տնտեսության նորոգարացման, կայուն և թվային Եվրոպայի կառուցման, տեղեկատվության ազատ տեղաշարժման հարցերը:

Համաժողովի օրակարգում ընդգրկված էր նաև Եվրոպայի օդային երթևեկության կառավարման ծրագիրը, ավիացիայի բարելավման հնարավորությունները, դրանց բարելավմանն ուղղված գործիքների ստեղծման հնարավորությունները, տիեզերքի կառավարման ծրագիրը, նոր ռադարային տեխնոլոգիաների տեղադրման հարցերը:

Քննարկվել են մուլտիմոդալ էլեկտրոնային շարժունակությանը վերաբերող հարցեր, հեղուկ գազը որպես այլընտրանքային վառելիք օգտագործելու հնարավորությունները, մի շարք տրանսպորտային միջանցքների բարելավման, հասարակական տրանսպորտի բարելավման, շրջակա միջավայրը հնարավորինս քիչ աղտոտելու հետ կապված հարցերը:

Համաժողովի օրակարգում ընդգրկված էին նաև երկաթուղային երթևեկության կառավարման համակարգի ստեղծման, ծովային տրանսպորտի, նավարկության համակարգի և նավահանգիստների բարելավման հարցերը:

«Կապակցելով Եվրոպան» համաժողովի շրջանակներում տեղի ունեցավ Արևելյան գործընկերության տրանսպորտի նախարարների հանդիպումը: Նախարարական հանդիպումը հաջորդում էր Սոֆիայի տարածաշրջանային ներդրումային կոնֆերանսին և կազմակերպվել էր Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ խորհրդարանի Էստոնիայի նախագահության կողմից:

Սույն հանդիպման նպատակն էր բացահայտել տրանսպորտի ոլորտում ներդրումների քաղաքականության գործողությունները և ֆինանսավորման լուծումները:

Հանդիպմանը ելույթով հանդես եկան ԵՄ Արևելյան գործընկերության տրանսպորտի նախարարներ և փոխնախարարներ, այդ թվում նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը:

Նախարարական հանդիպման ընթացքում նախարար Վահան Մարտիրոսյանը ներկայացրել է ՀՀ տրանսպորտային ենթակառուցվածքների ծրագրերը, ինչպես նաև ֆինանսական աջակցության կարիք ունեցող նոր նախագծեր, որոնք կարող են գրավել ԵՄ ֆինանսական կառույցների ուշադրությունը:

Իր ելույթում նախարարը կարևորել է տրանսպորտային ենթակառուցվածքների բարեփոխումներին ուղղված ծրագրերը, մրցակցության, գնագոյացման, ծառայությունների որակի և մատչելիության վրա ազդող «բիզնես մոդելների» ստեղծման անհրաժեշտությունը: Նախարարը ընդգծել է տրանսպորտի ոլորտում ընդհանուր քաղաքականության չափանիշների ու կանոնների սահմանման, իրականացման, խելացի լուծումների հաստատման անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել Արևելյան գործընկերության երկրներում տրանսպորտային բարեփոխումների հիմնական քաղաքականությունների առաջընթացին, խոչընդոտներին, ճանապարհային անվտանգության խնդիրների համար ավելի սերտ համագործակցությանն ու ֆինանսական աջակցությանը, ԵՄ-Չինաստան կապող հարթակի շրջանակներում հնարավոր համագործակցությանը, ավելի մաքուր տրանսպորտի ֆինանսավորմանը:

Ներկայացվել են հաջողության հասած տրանսպորտային ֆինանսավորման ծրագրերը, մասնավոր հատվածների միջև փորձի փոխանակման ուղղությունները:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Միջոցառման շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը հանդիպել է տրանսպորտի հարցերով ԵՄ հանձնակատար Վիոլետա Բուլչին:

Կողմերը քննարկել են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի» և Մ6-Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի կառուցման ընթացքը՝ որպես ԵՄ տրանսպորտային համակարգի (TEN-T) մաս:

Նախարարը հայտնել է, որ որոշ հատվածներում շինարարությունը հաջողությամբ ընթանում է, իսկ ծրագրի հարավային հատվածում բարդ ենթակառուցվածքների կառուցման ծրագիրը նախատեսվում է իրականացնել պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում:

Նախարարը Բուլչին ներկայացրել է նաև այլընտրանքային ճանապարհ հանդիսացող Մ-3 (Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման) ճանապարհի վերակառուցման ծրագիրը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետությունում ճանապարհների անվտանգության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին և ծրագրերին:

Նախարարը շնորհակալություն է հայտնել Վ. Բուլչին NIF դրամաշնորհը ձեռք բերելու հարցում աջակցության ցուցաբերելու համար և տեղեկացրել է Հայաստանում անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

Երկկողմ հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանում միասնական տրանսպորտային համակարգ ներդնելու նախագիծը: Վահան Մարտիրոսյանը նշել է, որ այն քննարկման փուլում է, և ուրախ կլինի տեսնել նաև ԵՄ մասնակցությունը ուղևորափոխադրման ոլորտի այս կարևոր ծրագրին:

Քննարկվել է նաև Հայաստանի սահմանային անցակետերի արդիականացման ծրագիրը, որտեղ իր մասնակցության բաժինը ունի նաև Եվրոպական կողմը:

Նախարարը Վ. Բուլչին տեղեկացրել է նաև Հայաստանի կողմից ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի նախագահությունը ստանձնելու հարցի վերաբերյալ:

Համաժողովի շրջանակներում հանդիպում է կայացել Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) ներկայացուցիչների հետ:

Նախարարը շնորհակալություն է հայտնել ԵՆԲ ներկայացուցիչներին Հայաստանի Հանրապետության տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման բնագավառում

ունեցած ակտիվ մասնակցության, ճանապարհային անվտանգության ծրագրերի աջակցության և ֆինանսավորման համար՝ նշելով, որ այն հիմնված է փոխշահավետ համագործակցության վրա:

Վերոնշյալ հանդիպման ընթացքում քննարկվել է նախարարության և ԵՆԲ-ի համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ընթացքը, մասնավորապես, Մ6՝ Վանաձոր - Ալավերդի - Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրին և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի Լանջիկ-Գյումրի հատվածի շինարարությանն առնչվող հարցեր:

Քննարկվեց նաև GIS համակարգի օգտագործման միջոցով ճանապարհների թվայնացման հարցը:

Նախարարն ընդգծել է իրականացվող ծրագրերի ռազմավարական նշանակությունը և հույս հայտնել, որ ճանապարհաշինական ծրագրերի շրջանակներում ձևավորված երկկողմ գործակցությունը կունենա շարունակական բնույթ:

ԵՆԲ ներկայացուցիչներն իրենց հերթին պատրաստակամություն են հայտնել մասնակցություն ունենալ նոր և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի ֆինանսավորմանը:

Միջոցառման շրջանակներում տեղի է ունեցել նաև քառակողմ հանդիպում Հայաստանի Հանրապետության, Վրաստանի, ԵՄ շարժունակության և տրանսպորտի վարչության Միջազգային տրանսպորտային հարաբերությունների ոլորտի ղեկավար Ալան Բարոնի, Եվրոպական հանձնաժողովի Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության NEAR.C.2 բաժնի պետ Վասիլիս Մարագոս և ԵՆԲ-ի ներկայացուցիչների միջև:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանում իրականացվող ճանապարհաշինական ծրագրերը, մասնավորապես այն ծրագրերը, որոնք ընդգրկված են Տրանս-Եվրոպական ցանցում որպես Հայաստանի Հանրապետության համար հիմնական ճանապարհներ և միանալով վրացական ճանապարհներին կազմում են ընդհանուր համակարգ՝ հանդիսանալով Եվրոպական Միության տրանսպորտային ցանցի (TEN-T) մի մասը:

Միջոցառման շրջանակներում հանդիպում է կայացել նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանի և Սլովենիայի Հանրապետության ենթակառուցվածքների նախարար Պետեր Գասպերիչի միջև: Քննարկվել են երկու երկրների միջև տրանսպորտի ոլորտում համագործակցության եզրերը և երկու երկրներում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերը:

♦ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանի՝ Էստոնիայի մայրաքաղաք Տալլին կատարած այցի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սլովենիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին» Համաձայնագիրը (կից ներկայացվում է): Սլովենիայի Հանրապետության կողմից այն ստորագրել է ենթակառուցվածքների նախարար Պետեր Գասպերիչը:

Համաձայնագիրը նպատակ ունի նպաստել երկու պետությունների միջև առևտրի և տնտեսական կապերի զարգացմանը, խթանել համագործակցությունը ճանապարհային փոխադրումների ոլորտում՝ շուկայական տնտեսության շրջանակներում, հասնել ինտերմոդալ փոխադրումների զարգացմանը:

Համաձայնագրով կարգավորվում են երկու պետությունների տարածքների միջև իրականացվող բեռների և ուղևորների ճանապարհային փոխադրման, իրենց երկրներով տարանցիկ և երրորդ երկիր կամ երրորդ երկրից կողմերից մեկի տարածքում գրանցված փոխադրողների կողմից իրականացվող փոխադրումները:

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վահան Մարտիրոսյան

26.09.2017թ.